ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1954 Общественные науки

Ն. Գասպարյան

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Մեր այս հոդվածի մեջ խնդիր չենք դրել ցույց տալ, թե որոնք են հասարակության օրենքները և ինչ հարաբերություն գոյություն ունի նրանց բոլորի միջև։ Մենք մեր առաջ խնդիր ենք դրել հասարակության մի քանի օրենքների օրինակներով պարզել, թե ինչ է ընդհանուր օրենքը և ինչ է յուրահատուկ (սպեցիֆիկ) օրենքը և ինչ հարաբերություն կարող է լինել նրանց միջև՝ ընդհանուր գծերով։ Այդ հարցի լուսաբանումը, ըստ մեզ, հնարավորություն կտա այս կամ այն օրենքը քննարկելիս հաշվի առնել գոյություն ունեցող հնարավոր կապակցությունները և դրանով իսկ ճիշտ լուսաբանել ուսումնասիրվող հասարակական այս կամ այն երևույթի իմաստը։

* * *

Ընդհանուր և յուրահատուկ օրենքների հարաբերությունը ընդհանուր և եզակի երևույթների (կամ հասկացությունների) հարաբերության հետ նույնական չէ։ Ընդհանուր և յուրահատուկ օրենքների հարաբերությունն այլ բովանդակություն ունի։ Այդ տարբերությունը չի կարելի չնկատել։ Այն հարաբերությունը, որ կա ընդհանուր և եզակի երևույթների և նրանց մասին հասկացությունների միջև և որի հանճարեղ մեկնաբանումը տրվել է Վ. Ի. Լենինի կողմից, չի կարելի նույնացնել ընդհանուր և յուրահատուկ օրենքների հարաբերության հետ։

Հասկացությունը մտածողության այն ձևն է, որի մեջ արտացոլված է երևույթն իր էական հատկանիշներով։ Եզակի հասկացության մեջ արտացոլվում են եզակի երևույթի (օրինակ, տվյալ պատերազմի) էական հատկանիշները, իսկ ընդհանուր հասկացության մեջ՝ ընդհանուր երևույթի (ընդհանրապես պատերազմի—միևնույն տեսակին, սեռին պատկանող երևույթների) էական հատկանիշները։ Ընդհանուր հասկացության (երևույթի) էական հատկանիշները միաժամանակ այդ հասկացության (սեռի, տեսակի հասկացության) մեջ ընդգրկված եզակի հասկացությունների (երևույթների) հատկանիշներ են։

Եզակի և ընդհանուր երևույթների հարաբերության մասին Վ. Ի. Լենինը տվել է հետևյալ մեկնաբանումը. «...առանձինը գոյություն չունի այլ կերպ, քան այն կապի մեջ, որ տանում է դեպի ընդհանուրը։ Ընդհանուրը գոյություն ունի միայն առանձինի մեջ, առանձինի միջոցով։ Յուրաքանչյուր առանձին (այսպես, թե այնպես) ընդհանուր է։ Յուրաքանչյուր ընդհանուր միայն մոտավորապես է ընդգրկում բոլոր առանձին իրերը։ Յուրաքանչյուր առանձին ոչ լրիվ է մտնում ընդհանուրի մեջ և այլն, և

այլն»[1]։ Այսպես է եզակի և ընդհանուր երևույթների և նրանց մասին հասկացությունների դիալեկտիկան։ Այդ նույն հարաբերությունը գոյություն չունի ընդհանուր և յուրահատուկ օրենքների միջև։ Օրենքը միշտ եզակի է իր ռեալ բովանդակության մեջ։ Այսպես, գոյություն ունի արժեքի օրենք, որպես այդպիսին մեկ, եզակի օրենք, բայց գոյություն չունեն արժեքի օրենքներ և, ուրեմն, նրանց մասին և նրանց ընդգրկող ընդհանուր արժեքի օրենք։ Սակայն օրենքը (տվյալ դեպքում արժեքի օրենքը) որպես մեկ, եզակի իր գոյությամբ օրենք, գոյություն ունի և գործում է միևնույն էական հատկանիշներ ունեցող, միևնույն տեսակին, սեռին պատկանող երևույթների մեջ։ Արժեքի օրենքը գոյություն ունի և գործում է ապրանքային տնտեսություն ունեցող հասարակական տարբեր ֆորմացիաներում և անցման շրջաններում։

Օրենքն իր բովանդակությամբ լինելով որպես միայն եզակի օրենք, նա միևնույն ժամանակ կարող է լինել որպես յուրահատուկ օրենք տվյալ երևույթի համար։ Լինելով տվյալ երևույթի օրենքը, նա տվյալ երևույթի համար միաժամանակ ընդհանուր օրենք է, որպես այդպիսին, և որով ղեկավարվում է տվյալ երևույթը իր գոյության և զարգացման ողջ ընթացքում։ Այսպես, արժեքի օրենքը եզակի օրենք է, նա ապրանքային տնտեսություն ունեցող հասարակության յուրահատուկ օրենքն է, բայց միաժամանակ ապրանքային տնտեսություն ունեցող հասարակական բոլոր ֆորմացիաների և անցման շրջանների ընդհանուր օրենքն է։ Տվյալ դեպքում արժեքի օրենքն ընդհանուր օրենք է ոչ թե այն իմաստով, որ այդ օրենքն իրենով ընդգրկում է մեկից ավելի արժեքի օրենքներ, այլ այն իմաստով, որ այդ օրենքը գործում է բոլոր դեպքերում, երբ գոյություն ունի ապրանքային տնտեսություն։ Արժեքի օրենքը չունի իրենից բարձր կարգի, կամ ստորին կարգի, կամ իրեն նույնական արժեքի օրենքներ։ Ճիշտ է, եթե հարցին մոտենում ենք տրամաբանական իր առումով, հնարավոր կլինի օրենքները դասակարգել որպես «սեռի», «տեսակի» պատկանող օրենքներ։ Այդ դեպքում մենք օրենքները վերցնում ենք որպես արդեն ընդհանրապես «օրենք» հասկացություն։ Այսպես, կա «օրենք» հասկացություն, որպես ընդհանուր հասկացություն, որպես սեռի հասկացություն, մի հասկացություն, որն արտացոլում է երևույթների (իրերի) մեջ կրկնվողը, ընդհանուրը, միայնը, անհրաժեշտը, էականը։ Կա «բնության օրենք» հասկացություն (բնության մեջ գործող օրենքներ), կա «հասարակության օրենք» հասկացություն (հասարակական կյանքում գործող օրենքները) և կա «մտածողության օրենք» հասկացություն (մտածողության օրենքները)։ Այդ կարգի օրենքներն արդեն իրենց տրամաբանական առումով տեսակի օրենքներ են և ընդգրկվում են «օրենք» ընդհանուր հասկացության մեջ։ Տեսակի պատկանող օրենքն իր հերթին իր մեջ ընդգրկում է եզակի (առանձին) օրենքներ։ «Բնության օրենք» հասկացությունը, որպես տեսակի հասկացություն, իր մեջ ընդգրկում է բնության մեջ գործող բոլոր առանձին (եզակի) օրենքները։ Մենք տվյալ դեպքում հարցի այդ կողմը չենք վերցնում։ Մեզ հետաքրքրում է այն հանգամանքը, թե ինչպես հասկանանք ընդհանուր և յուրահատուկ օրենքները և ինչ հարաբերու-

[1] В. И. Ленин, Философские тетради, стр. 329.

թյուն գոյություն ունի նրանց միջև։ Այս իմաստով էլ մենք փորձում ենք քննարկել հասարակական ընդհանուր և յուրահատուկ օրենքների դիալեկտիկան։

* * *

Մարդկային հասարակության պատմությունն սկսվում է արտադրության պատմությամբ։ Մարդիկ չեն կարող իրենց գոյությունը պահպանել առանց նյութական արտադրության։ Իսկ մարդը միայնակ չի կարող արտադրել իրեն անհրաժեշտ բարիքները։ Այդ բարիքների արտադրության համար մարդիկ պետք է միանային և այսպիսով ստեղծեին հասարակություն։ Հասարակության գոյության պայմանն արտադրությունն է։ Ինչպես որ չի կարող լինել արտադրություն առանց հասարակության, այնպես էլ չի կարող լինել հասարակություն առանց արտադրության։ Արտադրությունը միշտ էլ եղել է և կարող է լինել միայն հասարակական։ Արտադրությունը հասարակության զարգացման գլխավոր, որոշիչ ուժն է։ Արտադրությունը հասարակության գոյության անհրաժեշտ պայման է և այն անընդհատ է։ Արտադրության անհրաժեշտությունը և նրա անընդհատությունը պայմանավորված է սպառման գոյությամբ։ Սպառումը նույնպես անհրաժեշտություն է և անընդհատ։ Չի կարող լինել հասարակություն առանց սպառման։ Չի կարող լինել սպառում, ստեղծված բարիքների սպառում առանց հասարակության։ Սպառումը և արտադրությունը մեկը մյուսի հետ կապված է և մեկը մյուսով պայմանավորված կողմեր են։ Հասարակության գոյության փաստը միաժամանակ սպառման և արտադրության անհրաժեշտորեն գոյություն ունենալու փաստն է։ Ավելին, որքան հասարակության սպառողական պահանջներն ավելանում են, շատանում, այնքան ավելանում է ու ծավալվում արտադրությունը, իսկ արտադրության պրոցեսում ստեղծվում են նորանոր պահանջներ։ Արտադրությունը և սպառումը միևնույն պրոցեսի տարբեր կողմերն են։ Ինչպես որ յուրաքանչյուր օրգանիզմի համար անհրաժեշտություն են ասիմիլյատիվ և դեսիմիլյատիվ գործողությունները, այնպես էլ հասարակության, որպես մի օրգանիզմի, համար անհրաժեշտություն է արտադրությունը և սպառումը։

Արտադրությունը և սպառումը միևնույն չափով անհրաժեշտություն են հասարակության զարգացման բոլոր փուլերի համար։ Սակայն հասարակության զարգացման տարբեր փուլեր ունեցել են արտադրության և սպառման տարբեր ձևեր, տարբեր արտադրաեղանակներ։

Հասարակության պատմությանը հայտնի են հինգ տարբեր ֆորմացիաներ, և այդ ֆորմացիաներում արտադրությունը և սպառումը տարբեր եղանակներ ունեն։ Արտադրելու համար մարդիկ միանում են, բայց ինչպես են միանում, ինչ հարաբերությունների մեջ են մտնում արտադրության պրոցեսում, այդ չի կարող ամեն ժամանակ միատեսակ լինել։ Հասարակական ֆորմացիաները տարբերվում են միմյանցից այն բանով, թե ինչ արտադրաեղանակ է գոյություն ունեցել, մարդիկ ինչ հարաբերությունների մեջ են մտել միմյանց հետ արտադրության պրոցեսում։ Հասարակական ֆորմացիաները տարբերելու համար տրվում է այն հարցը, թե մարդիկ

ինչպես են արտադրում, ինչպես են միացել միմյանց հետ, ինչ հարաբերությունների մեջ են մտել միմյանց հետ։ Բայց այդ հասկանալու համար կարևոր է դառնում հասկանալ այն հարցը, թե ինչ գործիքներով են արտադրել։

Արտադրությունը և սպառումը, որպես միասնական պրոցես հասարակության զարգացման բոլոր փուլերում, զարգացել են հակասություններով։ Այդ հակասությունները արտահայտվում են ամենից առաջ այն բանում, որ միշտ էլ արտադրությունը ետ է մնում սպառումից։ Մարդկանց սպառողական պահանջները միշտ էլ նախորդել են արտադրությանը։ Ճիշտ է հասարակության զարգացման որոշ փուլերի ժամանակ մարդկանց սպառողական պահանջները, որոշ իմաստով ետ են մնում արտադրությունից։ Այդ լինում է այն դեպքում (ինչպես իմպերիալիզմի օրոք), երբ մարդկանց սպառողական պահանջները գոյություն ունեն, բայց սպառողական հնարավորությունները բացակայում են։ Այդպես կարող են բացատրվել, օրինակ, արտադրության ճգնաժամերը և այլն։

Արտադրության և սպառման միջև հակասությունը, երբ արտադրությունը ետ է մնում սպառումից, հասարակության զարգացման պայմանն է։ Եվ իսկապես, եթե արտադրությունը ետ չմնար սպառումից, ապա պահանջ չէր զգացվի բարելավելու, կատարելագործելու արտադրամիջոցները։ Արտադրամիջոցների կատարելագործումը տեղի է ունենում այն բանի համար, որպեսզի բավարարվեն սպառողական պահանջները։ Այս իմաստով արտադրությանը պետք է համապատասխանի սպառումը։

Այսպիսով, արտադրության և սպառման հակադրամիասնությունը և նրանց միջև համապատասխանությունը հասարակության, նրա զարգացման օբյեկտիվ, մարդկանց կամքից անկախ և գիտակցությունից դուրս գործող օրենքն է։ Այդ օրենքը ոչ մի կերպ չի կարող ոչնչացվել, կամ փոխվել, քանի դեռ գոյություն ունի հասարակությունը։ Այդ օրենքը գործել է հասարակության սկզբնավորման շրջանից և շարունակել է գործել հասարակության զարգացման բոլոր էտապներում և կարող է դադարել գործելուց միայն հասարակության ոչնչացման հետ միասին։ Այս օրենքն ընդհանուր օրենք է հասարակության զարգացման բոլոր փուլերի համար։ Սակայն, այդ օրենքից բացի գոյություն ունեն հասարակության զարգացման ընդհանուր ուրիշ օրենքներ։ Այդ ընդհանուր օրենքներով կապվում են միմյանց հետ հասարակության զարգացման տարբեր շրջաններ, ֆորմացիաներ։ Նրա զարգացման բոլոր էտապների համար որոշ օրենքներ անմիջականորեն կապված են արտադրության գոյության փաստի հետ։ Այդ ընդհանուր օրենքներից են նաև, օրինակ, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև հարաբերության, արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության օրենքները և այլն։

Ի՞նչ է արտադրությունը։ Արտադրությունը դա արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների, այդ տարբեր, բայց միաժամանակ անհրաժեշտ կողմերի միասնությունն է։ Չի կարող լինել արտադրություն այդ երկու կողմերից մեկի բացակայության դեպքում։ Չկան արտադրողական ուժեր առանց արտադրական հարաբերությունների և ընդհակառակը, չեն կարող լինել արտադրական հարաբերություններ առանց

արտադրական ուժերի։ Միասնական արտադրության մեջ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև նույնպես պահանջվում է համապատասխանություն։ Արտադրական հարաբերությունները միշտ ետ են մնում արտադրողական ուժերից, բայց վերջինների հետագա զարգացման համար արտադրական հարաբերությունների մեջ փոփոխություններ են մտցվում և համապատասխանեցվում նրանց, արտադրողական ուժերի բնույթին։ Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև համապատասխանության օրենքը նույնպես ընդհանուր օրենք է։ Այդ օրենքը նույնպես օբյեկտիվորեն գործող, բայց հասարակության զարգացման բոլոր էտապների համար պարտադիր օրենք է։ Առանց այդ համապատասխանության օրենքի հասարակությունը չի կարող իր գոյությունը երկար պահպանել։

Սակայն ինչ տարբերություն գոյություն ունի արտադրության ու սպառման համապատասխանության օրենքի և արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքի միջև։ Այդ տարբերությունը հետևյալն է։ Արտադրության ու սպառման միջև համապատասխանության օրենքի գոյությունը անմիջականորեն կապված է հասարակության գոյության փաստի հետ։ Գոյություն ունի հասարակությունը, ուրեմն և գործում է այդ օրենքը։ Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև համապատասխանության օրենքն անմիջականորեն կապված է արտադրության գոյության փաստի հետ։ Գոյություն ունի արտադրություն, ուրեմն և գործում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև համապատասխանության օրենքը։

Որն է արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների համապատասխանության և արտադրության ու սպառման համապատասխանության ընդհանուր օրենքների դիալեկտիկան։ Երկու դեպքումն էլ մենք գործ ունենք ընդհանուր օրենքների հետ։ Սակայն, ինչպես որ հասարակությունն ավելի ընդհանուր հասկացություն է, քան թե արտադրությունը հասկացությունը, այնպես էլ արտադրության և սպառման միջև համապատասխանության օրենքն ավելի ընդհանուր հասկացություն է, քան թե արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքը։ Երբ այս վերջին օրենքն իր կիրառման ասպարեզ չի գտնում, քայքայվում է արտադրությունը։ Արտադրության քայքայմամբ քայքայվում է ինքը հասարակությունը, իսկ վերջինի հետևանքով իր համար գործողության ասպարեզ չի գտնի նաև արտադրության ու սպառման համապատասխանության օրենքը։ Այս իմաստով այդ երկու կարգի օրենքները հավասարապես ընդհանուր օրենքներ են։ Իսկ ինչով է հիմնավորվում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքի նկատմամբ արտադրության ու սպառման համապատասխանության օրենքի ավելի ընդհանուր կարգի հասկացություն լինելը։ Արտադրության սպառման միջև համապատասխանության օրենքը գործում է հասարակության գոյությունը պայմանավորող հասարակության նյութական կյանքի պայմանների սիստեմում, այն ժամանակ, երբ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքը գործում է արտադրության սիստե-

մում։ «Հասարակության նյութական կյանքի պայմանները» ավելի ընդհանուր հասկացություն է, որովհետև այն իր մեջ ընդգրկում է բացի «աշխարհագրական միջավայրը», «ազգաբնակչությունը» հասկացություններից, նաև «արտադրությունը» հասկացությունը։

Այսպիսով, գոյություն ունեն հասարակության զարգացման ընդհանուր օրենքներ, որոնք, սակայն, մեկը մյուսին ենթակա (սեռի և տեսակի իմաստով) օրենքներ չեն, չնայած նրանք հավասարապես պայմանավորված են մեկը մյուսով։

* * *

Բացի այդ կարգի ընդհանուր օրենքներից, գոյություն ունեն նաև «յուրահատուկ»—սպեցիֆիկ օրենքներ, որոնցով տարբերվում են հասարակության զարգացման տարբեր էտապները, ֆորմացիաները։ Յուրահատուկ օրենքներն էլ իրենց հերթին կարող են լինել ավելի ընդհանուր և ավելի «ոչ-ընդհանուր» օրենքներ։ Այսպես, հասարակության զարգացման տարբեր էտապներում տարբեր արտադրանքներ են եղել։ Տարբեր այդ արտադրանքները կարելի է դիտել որպես արտադրանքներ, որոնք իրարից տարբերվում են արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր և հանրային սեփականության վրա հիմնված արտադրանքներ։ Մասնավոր սեփականության վրա հիմնված արտադրանքները նույնպես իրարից տարբերվում են որպես մասնավոր սեփականության տարբեր արտադրանքներ։

Արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակությունը զարգանում է իր յուրահատուկ օրենքներով, իսկ արտադրամիջոցների նկատմամբ հանրային սեփականության վրա հիմնված հասարակությունը զարգանում է իր յուրահատուկ օրենքներով։

Արտադրամիջոցների մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակություններում տնտեսական կատեգորիա է ապրանքափոխանակությունը, որի գոյության պայմաններում գործում է արժեքի օրենքը։ Չխոսենք մյուս բոլոր յուրահատուկ օրենքների մասին այդ կարգի հասարակություններում, բայց նշենք, որ արժեքի օրենքը, լինելով այդ կարգի հասարակություններում գործող յուրահատուկ օրենք, այն հավելյալ արժեքի օրենքի նկատմամբ ընդհանուր օրենք է, իսկ հավելյալ արժեքի օրենքը այդ օրենքի նկատմամբ ավելի «նեղ» օրենք է։ Արժեքի օրենքը գործում է այն հասարակություններում, երբ պահպանվում է ապրանքափոխանակությունը։ Այն գործել է ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական հասարակություններում, ինչպես նաև, ճիշտ է, սահմանափակ ոլորտում, բայց գործում է սոցիալիզմի օրոք, քանի դեռ ապրանքափոխանակությունը պահպանում է իր գոյությունը։ Հավելյալ արժեքի օրենքը հատուկ է հատկապես կապիտալիստական հասարակարգին, նրա հիմնական տնտեսական օրենքն է։ Արժեքի օրենքը և հավելյալ արժեքի օրենքը տարբեր օրենքներ են, բայց դրա հետ միասին միմյանց հետ կապված օրենքներ են։ Արժեքի օրենքն ավելի ընդհանուր է և այն գործել է այն ժամանակ, երբ դեռևս չէր գործում հավելյալ արժեքի օրենքը։ Արժեքի օրենքը գործում է սոցիալիզմի ժամանակ մեր երկրում, բայց դադարել է գործելուց հավելյալ արժեքի օրենքը։ Հավելյալ արժեքի օրենքը գործում է այն հասարակության (կապիտալիզմի) ժամանակ, երբ

շահագործվողը (բանվորը) ծախում է շահագործողին (կապիտալիստին) իր բանվորական ուժը։ Սակայն հավելյալ արժեքի օրենքը կարող է իրեն դրսևորել այն ժամանակ, երբ գոյություն ունի ապրանքափոխանակություն, այսինքն՝ գործում է արժեքի օրենքը։ Եթե արժեքի օրենքը չգործի, այսինքն՝ չունենա իր գործողության համար ասպարեզ (բացակայի ապրանքափոխանակությունը), ապա իր գործողության ասպարեզը կկորցնի նաև հավելյալ արժեքի օրենքը, նա ևս չի գործի։ Սակայն, եթե չի գործում հավելյալ արժեքի օրենքը, այդ չի նշանակում, որ չի գործում նաև արժեքի օրենքը։ Այսպիսով, հավելյալ արժեքի օրենքը յուրահատուկ օրենք է, իսկ արժեքի օրենքը հավելյալ արժեքի օրենքի համեմատությամբ ավելի ընդհանուր կարգի օրենք է։

Եթե արժեքի օրենքը ավելի ընդհանուր օրենք է հավելյալ արժեքի օրենքի նկատմամբ, ապա հավելյալ արժեքի օրենքն էլ իր հերթին ավելի ընդհանուր օրենք է կապիտալիզմի զարգացման տարբեր էտապներում գործող որոշ օրենքների համեմատությամբ, ինչպես, օրինակ, առավելագույն և միջին շահույթի օրենքների համեմատությամբ։

Հավելյալ արժեքի օրենքը, միջին շահույթի օրենքը և առավելագույն շահույթի օրենքը տարբեր օրենքներ են։ Հավելյալ արժեքի օրենքը գործում է կապիտալիզմի օրոք, նրա ծագման օրից մինչև նրա ոչնչացումը։

Հավելյալ արժեքի օրենքը իրենից ներկայացնում է կապիտալիստական շահույթի ծագման և աճման օրենք։ Մինչմոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում, երբ տիրապետող է հանդիսանում ազատ մրցումը, հավելյալ արժեքի օրենքը գործում է որպես միջին շահույթի օրենք։

Մինչմոնոպոլիստական կապիտալիզմի հիմնական գծերից մեկը կապիտալիստների ազատ մրցումն է։ Ազատ մրցման տիրապետության պայմաններում կապիտալիստների ձգտումը մեծ շահույթի օբյեկտիվորեն տանում է դեպի միջին շահույթի առաջացումը։ Միջին շահույթը դառնում է անհրաժեշտություն։ Չեռք չբերելով միջին շահույթ կապիտալիստական ձեռնարկատերերը դուրս են մղվում կապիտալիստական շուկայից։ Միջին շահույթի օրենքը, որի մասին տրված է մանրամասն և սպառիչ մեկնաբանումներ Կ. Մարքսի «Կապիտալ»-ում, գործում է կապիտալիզմի զարգացման մինչմոնոպոլիստական էտապում, որպես նրա հիմնական տնտեսական օրենքը։

Մոնոպոլիստական (ժամանակակից) կապիտալիզմի օրոք, երբ ազատ մրցման փոխարեն կապիտալիզմի հիմնական գծերից մեկը դառնում է կապիտալիստական խոշորագույն ձեռնարկությունների, ընկերությունների (կարտելների, սինդիկատների և այլն) մենաշնորհ դիրքը կապիտալիստական շուկայում, տիրապետող օրենք է դառնում մոնոպոլիստների առավելագույն շահույթի օրենքը։ Մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում հավելյալ արժեքի օրենքը գործում է որպես առավելագույն շահույթի օրենք։ Կապիտալիստական մոնոպոլիաները չեն կարող իրենց գոյությունը պահպանել և դուրս են մղվում մոնոպոլիաների միջև գոյություն ունեցող կատաղի մրցումից, եթե նրանք իրենց համար չապահովեն առավելագույն շահույթ։ Առավելագույն շահույթի օրենքը ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքն է։

Հավելյալ արժեքի օրենքը, որպես ընդհանուր օրենք և միջին շա-

հույթի ու առավելագույն շահույթի օրենքները, որպես յուրահատուկ օրենքներ, տարբեր, ինքնուրույն օրենքներ են։ Սակայն այդ օրենքները միաժամանակ միմյանց հետ կապված օրենքներ են։ Միջին շահույթի օրենքի գոյությունը պայմանավորված է հավելյալ արժեքի օրենքի գոյությամբ։ Ճիշտ նույն իմաստով էլ՝ առավելագույն շահույթի օրենքի գոյությունը պայմանավորված է հավելյալ արժեքի օրենքի գոյությամբ։ Եթե չլիներ բանվորական ուժի շահագործումը կապիտալիզմի կողմից, եթե չստեղծվեր հավելյալ արժեքը՝ արտադրության պրոցեսում, ապա կապիտալիստը չէր կարող ունենալ շահույթ, ուրեմն և չէր գործի ոչ միջին շահույթի օրենքը և ոչ էլ առավելագույն շահույթի օրենքը՝ կապիտալիզմի զարգացման տարբեր էտապներում։ Միջին շահույթի և առավելագույն շահույթի օրենքների գործողությունները անմիջականորեն կապված են հավելյալ արժեքի օրենքի գործողության հետ։ Այդ օրենքները հավելյալ արժեքի օրենքի հետ և նրա միջոցով կապվում են արժեքի օրենքի հետ, իսկ արժեքի օրենքի միջոցով կապվում են արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև համապատասխանության օրենքի հետ, իսկ այս վերջինիս միջոցով արտադրության և սպառման համապատասխանության օրենքի հետ։ Սակայն այդ օրենքների միջև եղած կապը չի տրված որպես սեռի և տեսակի, ընդհանուրի և եղակիի հարաբերություն։ Եթե գոյություն ունի և գործում է արժեքի օրենքը, անպայման չպետք է իր գոյությունը պահպանի և գործի հավելյալ արժեքի օրենքը, եթե գոյություն ունի արտադրության և սպառման համապատասխանության օրենք, անպայման չպետք է գոյություն ունենա արժեքի օրենք։ Այլ կերպ ասած, ոչ բոլոր դեպքերում է, որ ավելի ընդհանուր օրենքի գոյությամբ և նրա գործողությամբ պայմանավորված է ավելի «նեղ» (յուրահատուկ) օրենքի անպայման գոյությունը։ Ընդհանուր և յուրահատուկ օրենքների այդ դիալեկտիկան մեզ հասկանալի է դարձնում, օրինակ, հետևյալ հարցը. Ի՞նչ կապ կարող է լինել առավելագույն շահույթի օրենքի և արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքի, կամ արտադրության և սպառման համապատասխանության օրենքի միջև։

Առավելագույն շահույթի օրենքի գլխավոր գծերն ու պահանջները արտահայտում են արտադրամիջոցների մասնավոր սեփականության գոյության փաստը և այդ բանի հիման վրա մարդկանց մեծագույն մասի շահագործումը, հավելյալ արժեքի կորզումը մի բուռ մոնոպոլիստների կողմից։ Այն ժամանակ, երբ արտադրողական ուժերը այնքան վիթխարի են աճել, որ արտադրությունը ձեռք է բերել հանրային բնույթ, բարիքների յուրացումը մեծացել է մասնավոր, այդ հակասությունը ավելի է խորացել և մասնավոր յուրացումը հասցրել է այն բանին, որ մոնոպոլիստները կանգ չեն առնում ոչ մի միջոցի առաջ՝ առավելագույն շահույթ ստեղծելու համար։ Եթե այդ միջոցներին չդիմեն, ապա մոնոպոլիստները առավելագույն շահույթ ձեռք բերել չեն կարող, իսկ եթե առավելագույն շահույթ ձեռք չբերեն, արտադրած բարիքների մասնավոր յուրացումը չի կարող պահպանվել, մոնոպոլիստները չեն կարող իրենց գոյությունը պահպանել։ Սակայն մոնոպոլիստները իրենց գոյությունը պահպանելու համար գործադրում են բոլոր հնարավոր միջոցները առավելագույն շահույթի համար։ Այսպիսով, ստացվում է, որ արտադրողական ուժերի ու արտադրա-

կան հարաբերությունների համապատասխանությունը ժամանակակից կապիտալիզմի օրոք խախտված է։ Արտադրողական ուժերի վիթխարի աճը արտադրությունը դարձնելով հանրային, պահանջում է, որ սպառումը նույնպես լինի հանրային, այսինքն՝ պահանջվում է ոչնչացնել գոյություն ունեցող կապիտալիստական արտադրական հարաբերությունները, որի պայմաններում գործում է առավելագույն շահույթի օրենքը։ Իսկ առավելագույն շահույթի օրենքը, որը պահպանվում է կապիտալիստական արտադրական հարաբերությունների կրողների կողմից, բուրժուական վերնաշենքի ողջ ուժով, ավելի է խորացնում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների անհամապատասխանությունը։ Առավելագույն շահույթ ստանալու համար մոնոպոլիստների կողմից բնակչության մեծամասնության քայքայման ու աղքատացման հետևանքով ընկնում է նրա սպառողական ունակությունը, որն իր հերթին անհնար է դարձնում արտադրության հետագա աճը, քայքայում և կազմալուծում են արտադրողական ուժերը, արտադրությունն ապրում է ճգնաժամեր՝ իրենց բոլոր արհավիրքներով։ Ստեղծված դրությունից դուրս գալու և իրենց համար առավելագույն շահույթ ապահովելու համար մոնոպոլիստները հրահրում են ու կազմակերպում պատերազմներ և այլն։

Այսպես է իրականում ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքի՝ առավելագույն շահույթի օրենքի և արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության տնտեսական օրենքի միջև կապը։ Առավելագույն շահույթի օրենքի գործողությամբ ևս արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև անհամապատասխանությունն ավելի է խորանում, սրվում է և վերածվում կոնֆլիկտի։ Այդ կոնֆլիկտն իր արտահայտությունն է գտնում ընդհանուր առմամբ կապիտալիստական արտադրության լճացման մեջ, այն բանի մեջ, որ սկսած 1929 թ. կապիտալիստական խոշոր երկրների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլն, արտադրությունը դրեթե գոփում է միևնույն տեղում. նա իր արտահայտությունն է գտնում պարբերաբար և հաճախակի կրկնվող արտադրության ճգնաժամերի ու հրահրվող, կազմակերպվող իմպերիալիստական պատերազմների ու ազգային-ազատագրական ուժեղացող շարժումների մեջ։ Այդ կոնֆլիկտն իր արտահայտությունն է գտնում կապիտալիստական ընդհանուր սիստեմի ճգնաժամի մեջ և պատճառ է դառնում սոցիալական այն ռևոլյուցիային, որը ոչնչացնելով գոյություն ունեցող արտադրական հարաբերությունները, ստեղծում է նոր սոցիալիստական արտադրական հարաբերություններ, համապատասխան արտադրողական ուժերի բնույթին։ Սոցիալիզմի օրոք ընդհանուր և նրա յուրահատուկ օրենքների միջև ստեղծվում է նոր հարաբերություն։

Սոցիալիստական արտադրական հարաբերությունները համապատասխանում են արտադրողական ուժերի զարգացման ներկա վիճակին, որովհետև արտադրության հանրային բնույթին համապատասխան ստեղծվում է նաև արտադրանքի սպառման հանրային բնույթ։ Սոցիալիստական արտադրական հարաբերությունների պայմաններում գործում են նոր օրենքներ։ Սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքը՝ բնակչության հարաճուն պահանջմունքներն առավելագույն չափով բավարարելու օրենքն արդեն ոչ

թե սրում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև հակասությունը, այլ ապահովում է նրանց համապատասխանություն։ Այդ համապատասխանության մասին են վկայում Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների տնտեսական պլանների կատարման ցուցանիշները։ Բավական է հիշատակել հետևյալը. 1929 թվականից մինչև 1952 թ.՝ 23 տարվա ընթացքում արտադրության միջոցների արտադրությունը ՍՍՌՄ-ում աճել է 55 անգամ, իսկ ժողովրդական սպառման առարկաների արտադրությունը՝ մոտ 12 անգամ. 1953 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը նախապատերազմյան շրջանի համեմատությամբ աճել է մոտ երկուս ու կես անգամ։ Ժողովրդական դեմոկրատիայի երկրներում 1952 թ. արդյունաբերական արտադրության մակարդակը նախապատերազմյան շրջանի համեմատությամբ՝ Լեհաստանում աճել է 346,6 տոկոսով, Չեխոսլովակիայում՝ 200,6, Բուլղարիայում՝ 542,8, Հունգարիայում՝ 309, Ռումինիայում՝ 233,7, Ալբանիայում՝ 750, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայում՝ 136, իսկ Չինաստանի ժողովրդական Ռեսպուբլիկայի տնտեսությունը ոչ միայն վերականգնվել է, այլև գերազանցել է անցյալ տարիների ամենաբարձր մակարդակը։

Երբ խոսվում է ընդհանուրի և յուրահատուկի դիալեկտիկայի մասին, ապա նույն կարգով կարելի է խոսել նաև հասարակության զարգացման տվյալ էտապի հիմնական և մասնակի օրենքների դիալեկտիկայի մասին։ Ամեն մի երևույթ (տվյալ դեպքում հասարակական ֆորմացիա) իր բոլոր հատկանիշ կողմերով զեկավարվում է մեկ հիմնական օրենքով։ Սակայն հասարակական զարգացման յուրաքանչյուր էտապում, ֆորմացիայում օրինաչափական երևույթները նույնպես զեկավարվում են իրենց հատուկ օրենքներով։ Օրինաչափությունը օրենքի արտահայտությունն է երևույթի միջոցով։ Երբ ասում ենք—տվյալ երևույթը օրինաչափական է, դրանով ասում ենք, որ այն տեղի է ունենում համապատասխան որոշակի գործող օրենքի։ Այսպես, կապիտալիզմի օրոք մասնավոր ձեռնարկատերերի, մոնոպոլիստների միջև կոնկուրենցիան, մրցավազքը օրինաչափ երևույթ է։ Օրինաչափ երևույթ է նաև կապիտալիստական արտադրության անարխիկ բնույթը, արտադրության ճգնաժամերը (գերարտադրություն) և այլն։ Նշանակում է, կապիտալիզմի օրոք գործում են նաև կոնկուրենցիայի, գերարտադրության և այլ օրենքներ։ Այդ օրենքները գործում են միաժամանակ հիմնական տնտեսական օրենքի հետ միասին, բայց հանդիսանում են ոչ թե ժամանակակից կապիտալիզմի հիմնական, այլ ոչ հիմնական, մասնակի, կապիտալիստական տնտեսության այս կամ այն կողմին, այս կամ այն երևույթին վերաբերող օրենքներ։ Այդ բոլոր օրենքներն էլ մարդկանց կամքից անկախ, օբյեկտիվորեն գործող օրենքներն են։ Այդ օրենքները չեն կարող ոչնչացվել ոչ միայն անհատների, խոշոր գործիչների, պարտիաների, այլև ընդհանրապես մարդկանց, ժողովրդական մասսաների կողմից։ Ճիշտ չի լինի այն պնդումը, թե եթե օրենքները չեն կարող ոչնչացնել կամ փոխել անհատները, ապա այդ կարող են անել մասսաները։ Մասսաները չեն կարող օրենքները ոչնչացնել, եթե պահպանվում է երևույթը։ Սակայն ճիշտ կլինի, եթե ասենք, որ երբ մասսաները ոչնչացնեն երևույթը

(ասենք, կապիտալիզմը), այն ժամանակ կդադարեն գործել նաև այդ երևույթի յուրահատուկ օրենքները։

Այսպիսով, որքանով էլ որ հաճելի կամ տհաճ լինեն օրենքները մարդկանց (կամ մարդկանց մի խմբի) համար, մարդիկ, ճիշտ է, կարող են այդ օրենքների գործողության ոլորտը սահմանափակել, կարող են այդ օրենքներն օգտագործել համապատասխան իրենց շահերի, բայց չեն կարող նրանց ոչնչացնել, եթե պահպանվում է երևույթը, որի ժամանակ գործում են այդ օրենքները։ Ճիշտ չի լինի նաև խոսել «լավ» և «վատ» օրենքների մասին։ Լավ և վատ օրենքներ չկան։ Չի կարելի նաև խոսել օրենքների պրոգրեսիվ կամ ռեակցիոն դերի մասին։ Ճիշտ է, կան օրենքներ, որոնց գործողության հետևանքով մարդիկ (կամ մարդկանց մի մասը) մեծ զբաղմունքների են ենթարկվում, բայց այդ չի նշանակում, որ օրենքն է վատ։ Այդ նշանակում է վատ է այն երևույթը, որի գոյության ժամանակ գործում է այդ օրենքը։ Ասում են, թե ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքը ռեակցիոն դեր է խաղում արտադրողական ուժերի զարգացման գործում։ Այդ ճիշտ չէ։ Ռեակցիոն է ոչ թե այդ օրենքը, այլ ռեակցիոն է այն դասակարգը, որը պաշտպանում է (ոչ թե օրենքը, այլ) այն երևույթը (տվյալ դեպքում՝ կապիտալիզմը), որի օրոք գործում է այդ օրենքը։ Ուրեմն, ցանկալի հասարակարգ ստեղծելու համար պետք է վերել ռեակցիոն դասակարգերի դիմադրությունները, ոչնչացնել նրանց կողմից պահպանվող հասարակարգը։ Տվյալ հասարակարգի ոչնչացման հետ միասին կանհետանան և նրա յուրահատուկ օրենքները։

Կապիտալիզմի օրոք գործող բոլոր օրենքները այս կամ այն չափով կապված են միմյանց հետ, որոշ օրենքներ պայմանավորված են ժամանակակից հիմնական տնտեսական օրենքի գոյությամբ։ Այսպես, մոնոպոլիստների առավելագույն շահույթի օրենքը միմյանց հետ կոնկուրսի մեջ է պահում մոնոպոլիստներին, որոնք ձգտում են պահպանել իրենց մենաշնորհ դիրքը ապրանքային շուկայում։ Այդ ձգտումը կարող է որոշ իմաստով ապահովել արտադրության պլանավորումը մոնոպոլիայի ներսում, բայց անարխիա է առաջ բերում տվյալ երկրի տնտեսական կյանքում։ Տարբեր մոնոպոլիստներ հանդես են գալիս իրենց տարբեր ձգտումներով և շահերով և նրանց մասնավոր սեփականատիրական այդ ձգտումներն ու շահերը երբեք չի կարելի հաշտեցնել, կոորդինացնել և, ուրեմն, տնտեսության մեջ մտցնել պլանավորում։ Անպլանային արտադրությունը սիստեմատիկ կերպով առաջ է բերում գերարտադրություն, որ նշանակում է, մի կողմից, ապրանքների շատություն, մյուս կողմից սպառող մասսաների գնողունակության պակասության (եթե ոչ բացակայության) հետևանքով շուկայի նեղացում։ Գերարտադրության դեպքերը, կապիտալիստական արտադրության դժվարությունները, տնտեսական ճգնաժամերը նոր, բայց ավելի մեծ մասշտաբի ճգնաժամեր են նախապատրաստում մանավանդ ժամանակակից կապիտալիզմի օրոք, երբ կապիտալիզմն ապրում է ընդհանուր ճգնաժամ և դժվարացնում, հարվածի տակ դնում մոնոպոլիստների առավելագույն շահույթի ապահովումը։

Կապիտալիստական մոնոպոլիաներն իրենց գոյությունը պահպանելու համար ձգտում են ապահովել առավելագույն շահույթը, որի համար կանգ

չեն առնում միջոցների առաջ, որի համար հրահրում են, նախապատրաստում և կազմակերպում պատերազմներ։

* * *

Հասարակության զարգացման տվյալ շրջանը, ֆորմացիան, էտապը հասկանալու համար անհրաժեշտ է ամենից առաջ պարզել, թե հասարակության զարգացման տվյալ շրջանի, ֆորմացիայի օրոք գործողության ինչ ասպարեզ ունեն նրա յուրահատուկ օրենքները և որն է նրա հիմնական տնտեսական օրենքը։ Ժամանակակից կապիտալիզմի երևույթները հասկանալու համար անհրաժեշտ է, ամենից առաջ, պարզել նրա հիմնական տնտեսական օրենքը, նրա բնույթը և պահանջները։ Ժամանակակից կապիտալիզմի բոլոր օրենքներն էլ ունեն իրենց գործողության սեփական ոլորտները։ Սակայն այդ օրենքները մեկը մյուսի հետ կապված և մեկը մյուսով պայմանավորված օրենքներ են։ Նրանք անհասկանալի կլինեին, եթե այդ կապերն ու պայմանավորվածությունը չբացահայտվեն։ Այդ օրենքներն արտահայտում են ժամանակակից կապիտալիզմի բոլոր կողմերի միասնական ամբողջությունը։ Կապիտալիստական տնտեսությունը մի ամբողջական միասնական երևույթ է և այդ միասնական սիստեմում մեկ երևույթը բացատրվում է մյուսով։ Հասկանալի է, որ ժամանակակից կապիտալիզմի (ինչպես նաև յուրաքանչյուր ֆորմացիայի, էտապի) օրենքները հասկանալի են դառնում, երբ նրանց մենք վերցնում ենք իրենց ամբողջության մեջ։ Հասարակության օրենքների միջև կապը, պայմանավորվածությունը անհասկանալի կլինեն, և այդ կապի մասին մեր իսկ սեփական դատողությունները կլինեն անբովանդակ կամ սխալ, եթե այդ կապը մենք որոնենք անկախ ժամանակից, տեղից, պայմաններից, եթե այդ մենք չուսումնասիրենք հասարակության զարգացման կոնկրետ ժամանակաշրջանի, էտապի պայմաններում։ Այլ բան է, եթե մենք հասարակության զարգացման օրենքների միջև կապը ուսումնասիրում ենք, երբ նրանց գործողությունը կատարվում է հասարակական զարգացման տարբեր շրջաններում (ֆորմացիաներում, էտապներում), այլ բան է, երբ այդ կապը ուսումնասիրում ենք միևնույն, ասենք, ֆորմացիայում կամ նրա զարգացման տարբեր էտապներում։

Ինչ կապ կարող է լինել, ասենք, կապիտալիզմի և սոցիալիզմի, այդ տարբեր հասարակական ֆորմացիաներում գործող հիմնական տնտեսական օրենքների՝ ժամանակակից կապիտալիզմի մոնոպոլիստների առավելագույն շահույթի օրենքի և սոցիալիզմի՝ բնակչության հարաճուն պահանջմունքների առավելագույն բավարարման օրենքի միջև։ Իսկ էության այդ օրենքները, որպես տարբեր, տրամագծորեն հակադիր ֆորմացիաների յուրահատուկ օրենքներ, չեն գտնվում միմյանց պայմանավորող որոշակի կապակցության մեջ։ Նրանք իրենց բովանդակությամբ տարբեր օրենքներ են և մեկի գոյությունը ենթադրում է մյուսի բացակայությունը։ Նրանք չեն կարող ճանաչվել ոչ միայն որպես նույնական, այլև որպես կոորդինացիոն և սուբորդինացիոն օրենքներ։ Սակայն այդ օրենքների բնույթի և պահանջների ուսումնասիրության օգնությամբ հնարավոր է բացահայտել կապիտալիզմի և սոցիալիզմի, որպես հասարակական տարբեր ֆորմացիաների, խորը. էական տարբերությունը և բացատրել այդ ֆորմացիաներում տեղի

ունեցող հասարակական երևույթների իմաստն ու բովանդակությունը։ Այդ հիմնական տնտեսական, ինչպես նաև մյուս յուրահատուկ օրենքների և հասարակական զարգացման ընդհանուր օրենքների դիալեկտիկան մեզ հնարավորություն է տալիս բնագիտական ճշտությամբ բացատրել հասարակական տարբեր ֆորմացիաների զարգացման սկիզբը, ընթացքը, ուղղությունը և հետևանքները։ Հասարակական տարբեր ֆորմացիաները միմյանց հետ կապված են հասարակական զարգացման ընդհանուր օրենքներով, իսկ տարբերվում են իրենց յուրահատուկ օրենքներով։ Հասարակական զարգացման ընդհանուր և տարբեր ֆորմացիաների յուրահատուկ օրենքների դիալեկտիկայի ուսումնասիրությունը կազմում է հասարակական գիտությունների բովանդակությունը։ Հասարակական օրենքների միջև եղած կապը ավելի խորը հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, թե տվյալ երևույթի համար ինչ նշանակություն ունեն տվյալ երևույթի յուրահատուկ օրենքը և ավելի ընդհանուր բնույթ կրող օրենքը։ Այսպես, մենք ընդունում ենք արտադրության և սպառման համապատասխանության օրենքի և արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքի միջև կապը, բայց արտադրության զարգացման համար այդ օրենքներից, որը ինչ դեր է խաղում, այդ նույնպես պետք է տեսնել։ Հասկանալի է, որ արտադրության գոյության համար սպառումը հիմք է ծառայում։ Սակայն այդ արտադրության և սպառման դիալեկտիկայի հարցի մեկ կողմն է։ Առանց սպառման չկա արտադրություն։ Այդ, իհարկե, ճիշտ է։ Ճիշտ է և այն, որ մարդկանց հարաճուն պահանջները բավարարելու է արտադրության զարգացումը։ Սակայն ճիշտ է նաև այն, որ արտադրության զարգացման համար, բացի բոլոր մյուս պայմաններից, անհրաժեշտ է արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանությունը։ Եթե բացակայի այդ համապատասխանությունը, ապա արտադրողական ուժերը չեն կարող զարգանալ, ուրեմն և արտադրությունը նույնպես դոփելու է միևնույն տեղում, չնայած սպառման պահանջը միշտ կա։ Իսկական չի միայն սպառման պահանջը, անհրաժեշտ է նաև սպառման համար պայմանների ստեղծումը, սպառման հնարավորությունը։ Այսօր Հնդկաստանում կա սպառման լայն պահանջ։ Մոտ 350 միլիոն բնակիչներ Հնդկաստանում սպառման խոշոր պահանջ ունեն։ Սակայն այդ բնակիչները զրկված են արտադրելու իրենց համար պահանջված բարիքներ։ Ի դեպ նկատենք, որ նրանք զրկված են նաև սպառման անհրաժեշտ հնարավորությունից։ Քայքայման ու աղքատացման հետևանքով ապրանքների նրանց գնողունակությունն ընկել է։ Ապրանքներով կարող է հեղեղված լինել հնդկական շուկան, բայց բնակիչների մեծամասնությունը ապրանքներ գնելու համար չունի միջոց, դրամ՝ այդ ապրանքները գնելու։

Այսպիսով, սպառման պահանջը կա, բայց տեղի բնակչությունը զրկված է իր գոյությունը պահպանելու համար բարիքներ արտադրելու լայն հնարավորությունից, նա զրկված է նաև դրսից ներմուծած ապրանքների սպառման հնարավորությունից։ Այդպես է փաստը, որովհետև մեր ժամանակի կապիտալիստական արտադրական հարաբերությունները խոչընդոտ են հանդիսանում, արտադրողական ուժերի զարգացմանը ոչ միայն կոնտինենտում այլև գաղութներում և կախյալ երկրներում։

Այսօր կապիտալիստական աշխարհում արտադրությունը ընդհանուր առմամբ դոփում է միևնույն տեղում. Այդ հետևանք է այն բանի, որ արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունները չեն համապատասխանում։ Այսպիսով, կապիտալիստական աշխարհում (ներառյալ նաև գաղութային և կախյալ երկրները) արտադրության և սպառման համապատասխանության օրենքի գործողության համար ասպարեզը շատ նեղացել է, որովհետև չափազանց նեղացել է արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության տնտեսական օրենքի գործողության ասպարեզը։ Ուրեմն, ընդհանուր օրենքների և ընդհանուր ու յուրահատուկ օրենքների միջև կապը պետք է նկատել ոչ միայն հասարակական զարգացման ընդհանուր ընթացքի մեջ, այլև տարբեր ֆորմացիաներում, էտապներում, ինչպես նաև տվյալ երևույթի օրենքի գործողության ասպարեզի տեսակետից։ Ընդհանուր և յուրահատուկ օրենքների այս դիալեկտիկան միշտ պետք է քննության առնել իր կոնկրետության մեջ։

Հասարակական երևույթները հասկանալու և ճիշտ կերպով, խորը մեկնաբանելու համար անհրաժեշտ է ելնել հասարակության ընդհանուր և յուրահատուկ օրենքների դիալեկտիկայից։